

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹՈՒՄԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՐՏՅՈՄԻ

ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

ԺԲ. 00.05.- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»  
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ТУМАСЯН ДАВИД АРТЕМОВИЧ

ОСОБЕННОСТИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ В ВИДЕ

ЛИШЕНИЯ СВОБОДЫ

В ОТНОШЕНИИ ОСУЖДЕННЫХ ЖЕНЩИН

А В Т О Р Е Ф Е Р А Т

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по  
специальности: 12.00.05-“Уголовное право и криминология, уголовно-  
исполнительное право”

Ереван-2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Հ.Մ. ԽԱՉԻԿՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,  
դոցենտ Ս.Ա. ԳԻԼԲԱՆԳՅԱՆ

իրավաբանական գիտությունների  
թեկնածու Վ.Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ դատախազության դպրոց

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հոկտեմբերի 5-ին,  
ժամը 14<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության  
001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2012 թ. սեպտեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար  
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա.Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор А.М. ХАЧИКЯН

Официальные оппоненты: доктор юридических наук, доцент С.А. ДИЛБАНДЯН

кандидат юридических наук В.А. ШАХНАЗАРЯН

Ведущая организация: Школа прокуратуры РА

Защита состоится 5-ого октября 2012 г., в 14<sup>00</sup> часов на заседании специали-  
зированной совета ВАК-а 001 по юриспруденции при Ереванском государственном  
университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников  
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 5-ого сентября 2012 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук, доцент

А.Г. Вагаршян

based on the principles of human dignity, fair treatment, the ensuring their self-respect, the protection of the rights of prisoners and the maintenance of international standards. Previously, the conditions of the detention of convicts were determined not only and not so much by the Code (The Corrective-labor Code of Armenian Soviet Socialistic Republic), but also by other regulations (Internal Regulations and more than three hundred laws and regulations of the Ministry of Interior Affairs).

At the present moment, there are about thirty subordinate regulations governing the criminal-executive legal relations in the Republic of Armenia, but they deal with those spheres of the criminal-executive legal relations that are rapidly changing and are not included in the framework of the law regulation or are the result of the symbiosis of the related branches of science, disciplines and law norms.

A notable feature of all documents governing the criminal-executive legal relationships was their closeness, the actual lack of access for most citizens and, above all, for the prisoners themselves. Meanwhile, these documents in minute detail regulated the life in prison and imposed many rules and restrictions, not even mentioned in open legislation.

Proceeding from the results of the comparison of the international and national legislations governing the women imprisonment and on the basis of these deductions, the author identifies some definite and specific collisional issues of serving a sentence of imprisonment punishment by convicted women in the Republic of Armenia, as well as provides possible ways of their elimination. In particular, it is proposed to make amendments and changes to the current Criminal-executive Code of the Republic of Armenia, as well as into the Republic of Armenia Government Resolution dated 2006, August 3.

In the second chapter the procedure and the conditions for the execution of the imprisonment of convicted women are examined in detail, i.e. not only the legislative framework governing these legal relationships is analyzed, but also the problem of the enforcement of these rules in practice is looked upon.

The procedure and conditions for the execution of the imprisonment of convicted women was carried out based on the survey of 134 convicted women and 100 employees of the "Abovyan" Executive Institution and the Criminal-executive Department of the Ministry of Justice of the Republic of Armenia, on the study of the individual cases of convicted women as well as on the visits of "Abovyan" Executive Institution.

Since the microsocial conditions of the convicts in prisons have a significant impact on the process of their correction and they act as the objective determinants of the behavior of the convicts, the issue of the subculture of convicted women and its characteristic peculiarities was presented and analyzed by the author.

In the conclusion, the author presents the main deductions of the dissertation research, including specific proposals for legislative changes and additions that will ensure the scientific validity of the reforming the execution of the imprisonment punishment of the convicted women.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտվող թեմայի արդիականությունը:** Այսօր և՛ պետական մարմինները, և՛ հասարակական ու միջազգային կազմակերպություններն ամենատարբեր մակարդակներում հաճախ բարձրացնում են կանանց վերաբերող առանձին հարցեր՝ ներառյալ կանանց հանցավորության և նրանց նկատմամբ պատժի կատարման խնդիրները: Անվիճելի է, որ այդպիսի կարևոր հարցերի հաջող լուծման անհրաժեշտ նախապայմաններից մեկը քրեակատարողական իրավունքի և օրենսդրության ընդհանուր գիտական հիմունքների մշակումն ու զարգացումն է: Մինչդեռ հայրենական իրավագիտության մեջ ազատագրկման դատապարտված կանանց պատժի առանձնահատկությունների համակարգային և համալիր տեսական հետազոտություն մինչ այժմ չի կատարվել:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ոչ բարվոք վիճակը, հասարակական կյանքի արդի պայմանների դժվարությունները, սոցիալ-քաղաքական և տնտեսական փոփոխություններն առաջացրել են մի շարք լուրջ խնդիրներ, այդ թվում՝ կանանց հանցավորության աճ: Դրան նպաստել է նաև վերջին տասնամյակներում հասարակության մեջ կնոջ սոցիալական դերի բարձրացումն ու գործունեության ոլորտի ընդլայնումը: Հանցավորության զգալի աճով պայմանավորվել է նաև կանանց հանցավորության դինամիկայի ու կառուցվածքի կայուն բացասական փոփոխությունները: Այդ ցուցանիշներից մեկն է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում<sup>1</sup> պատիժ կրող կանանց թվի կայուն աճը:

Հայաստանում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխանող կառուցակարգերի հիմնումն է: Խոսքը հատկապես վերաբերում է ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման գործուն երաշխիքներ սահմանելուն: Ընդ որում, նշված անձինք հենց ազատագրկված լինելու արդյունքում է, որ իրավունքները խախտելու տեսանկյունից առավել խոցելի վիճակում են գտնվում:<sup>2</sup> Չնայած այդ բարեփոխումների և Հայաստանում կանանց նկատմամբ իրականացվող քրեական ու քրեակատարողական քաղաքականության փոփոխմանը՝ ազատագրկման դատապարտված կանանց թիվը տարեցտարի աճում է: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության տվյալների համաձայն՝ 2000թ.-ից սկսած՝ ազատագրկման դատապարտված կանանց թիվը տարեկան տատանվում է 80-ից 168-ի սահմաններում: Այսպես՝ 2008թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ազատագրկման ձևով պատիժ էին կրում 121 կին դատապարտյալ, 2009թ.-ի՝ 149, 2010թ.-ի՝ 158, 2011թ.-ի՝ 159, իսկ 2012թ.-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 168 կին դատապարտյալ:

Ընդ որում, ազատագրկման դատապարտյալների ընդհանուր թվի մեջ աճել է նաև ազատագրկման դատապարտված կանանց տեսակարար կշիռը: Այսպես՝ 2008թ.-ին կանանց թիվը ընդհանուր ազատագրկվածների թվում կազմել է ընդամենը 4.1%, 2009թ.-ին՝ 4.8%, 2010թ.-ին՝ 5.2%, 2011թ.-ին՝ 4,3%, իսկ 2012թ.-ին՝ 4,6%:<sup>3</sup>

<sup>1</sup> Այսուհետ՝ ՔԿՀ:

<sup>2</sup> ՀՀ քրեակատարողական օրենսդրության համապատասխանելիությունը մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին: Չեկոյց: Երևան, 2011, էջ 5:

<sup>3</sup> Այստեղ պետք է հաշվի առնել, որ ավելացել է ոչ միայն ազատագրկման դատապարտված կանանց, այլ նաև դատապարտված տղամարդկանց քանակը: Հետևաբար այդ երկու ցուցանիշներն աճում են զուգահեռ:

Վերջին հինգ տարվա ընթացքում փոխվել է նաև առաջին անգամ դատապարտված կանանց հարաբերակցությունը ռեցիդիվի վիճակում հանցանք կատարած կանանց համեմատ: Տարեցտարի ավելանում է և՛ առաջին անգամ դատապարտված կանանց, և՛ երիտասարդ տարիքում ազատազրկման դատապարտված կանանց թիվը: Ընդ որում, ընդլայնվում է նաև կանանց կողմից կատարված հանցագործությունների շրջանակը: Ուստի հրատապ է կանանց պատժի, մասնավորապես ազատազրկման, կատարման առանձնահատկությունների գիտական հիմնավորվածության խնդիրը: Դրա համար անհրաժեշտ է բացահայտել սոցիալական վերահսկողության համակարգի ներկայիս պայմաններում կանանց նկատմամբ քրեակատարողական իրավահարաբերությունների առանձնահատկությունները: Վերոգրյալով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության արդիականությունը հիմնավորվում է նաև սոցիալ-տնտեսական կողմնորոշիչների արդի պայմանների փոփոխությամբ, նոր հասարակական հարաբերությունների առաջացմամբ և նոր քրեական ու քրեակատարողական օրենսգրքերի ընդունմամբ: Անհրաժեշտ է նշել, որ կանանց ազատազրկումը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել՝ չսահմանափակվելով միջազգային և ազգային քրեակատարողական օրենսդրությամբ, այլ անհրաժեշտ է նաև վերլուծել կանանց ու նրանց իրավական վիճակին վերաբերող բազմաթիվ միջազգային ու ներպետական իրավական ակտեր, քանի որ ազատազրկման ձևով պատիժ կրող կինն օգտվում է իր սեռային պատկանելությունից բխող որոշակի արտոնություններից ու առավելություններից, որոնք սահմանափակելն անթույլատրելի է և ոչ նպատակային: Առավել սուր այս հարցը քննարկվում է գենդերային հավասարության և գենդերի եզրույթի լույսի ներքո մասնավորապես այն պետություններում, որտեղ գենդերային զարգացումը գտնվում է ցածր կամ միջին մակարդակի վրա, որոնց թվին դասվում է նաև Հայաստանը<sup>4</sup>:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** Մասնագիտական գրականության մեջ ազատազրկման դատապարտված կանանց պատժի առանձնահատկությունները չեն քննարկվել: Դրանք ուսումնասիրվել են միայն ընդհանուր պատիժների կատարման տեսանկյունից կամ կանանց հանցավորության համատեքստում: Կանանց պատժի առանձնահատկությունները կամ դրա առանձին հիմնահարցերը տարբեր ժամանակահատվածներում ուսումնասիրվել են Յու. Մ. Անտոնյանի, Ե. Գ. Բագրեևայի, Ի. Վ. Ժիժինայի, Գ. Ֆ. Խոխրյակովի, Տ. Ս. Պետրովի, Ե. Վ. Սերեդայի աշխատություններում:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է ազատազրկման դատապարտված կանանց պատժի կատարման, դրա իրավական կարգավորման, դատապարտյալ կանանց իրավական վիճակի և ենթամշակույթի համալիր ուսումնասիրությունն ու դրա վերլուծության հիման վրա քրեակատարողական համակարգի, ՀՀ գործող քրեակատարողական օրենսդրության բարեփոխումը, մասնավորապես գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը ազատազրկման դատապարտված կանանց պատժի կատարման կարգի ու պայմանների բարելավման ու դրանց արդյունավետության բարձրացման վերաբեր-

<sup>4</sup> ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը և դրա միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» 2004թ.-ի ապրիլի 8-ի որոշման հավելվածի ներածության համաձայն՝ Հայաստանը գենդերային զարգացման համաթվով 62-րդն է:

The thesis is devoted to a complex research of the problems of the execution of imprisonment punishment of convicted women in the Republic of Armenia.

The object of the dissertation is to study and to analyze the performance and the legal regulation of the imprisonment punishment of convicted women, to define the reforms of the criminal-executive legislation and penal system on the basis of this analysis, to make suggestions for the improvement to ensure the scientific validity of criminal-executive legislation of the Republic of Armenia according to the conditions and the order of the execution of the imprisonment punishment.

The scientific novelty of this thesis is that for the first time in the Republic of Armenia on the basis of the theoretical material and practical legislative process a complete and comprehensive study of the problems of the imprisonment execution of women in the Republic of Armenia has been conducted on the level of the PhD research.

The practical significance of the dissertation is that the basic provisions and deductions of the thesis can be used in the development of the law drafts on Making Amendments and Changes to the Criminal-executive Code of the Republic of Armenia, as well as in the curriculums of teaching process of Law Institutions.

The dissertation consists of the Introduction, two chapters, which are subdivided into paragraphs, the Conclusion, the Bibliography and the Appendix.

In the Introduction the author presents the novelty and the vital importance of the research, the degree of the study of the issue, the aims and problems of the dissertation, its subject and object, the methodological, theoretical, empiric and normative basis of the work, main issues to be revealed in the theses as well as the theoretical and practical significance of the work. The approbation of the materials are also substantiated.

In the first chapter the author reveals the socio-legal essence of the imprisonment punishment of women, the socio-legal nature of this punishment, analyzes and compares the international and national legislations which regulate the women imprisonment, particularly focusing on the legal situation of women prisoners in the Republic of Armenia.

Imprisonment as a form of punishment is stipulated by the Criminal Code of the Republic of Armenia, and the order of its execution is stipulated by the Criminal-executive Code of the Republic of Armenia and the Republic of Armenia Government Resolution dated 2006, August 3, № 1543-N "About the Enactment of the Rules of Internal Procedure of penal institutions and places of the detention of arrestee of the criminal-executive service of the Ministry of Justice of the Republic of Armenia."

In addition to the national legislation, the imprisonment is regulated by the international law as well. During the last decade the importance of the UN Standard Minimum Rules for the Treatment of Prisoners as well as the European Prison Rules especially grew up. The latter defined the main directions of the social policy in respect to the prisoners, which were

направления социальной политики в отношении осужденных, которые основывались на принципах уважения человеческого достоинства, справедливого обращения, обеспечения самоуважения, защите прав осужденных и соблюдении международных стандартов. Ранее условия содержания осужденных определялись не только и не столько действующим кодексом (Исправительно-трудовой кодекс Арм. ССР), но и иными актами (Правилами внутреннего распорядка и более, чем тремя сотнями актов и инструкций Министерства внутренних дел). На данный момент в РА подзаконных актов, регулирующих уголовно-исполнительные правоотношения около тридцати, но они относятся к тем сферам уголовно-исправительных правоотношений, которые быстро изменяются и не входят в рамки урегулирования закона или являются результатом симбиоза смежных отраслей науки, дисциплин и норм права. Примечательной особенностью всех актов, регулирующих уголовно-исполнительные правоотношения, являлась их закрытость, фактическая недоступность для большинства граждан и, в первую очередь, для самих осужденных. Между тем, именно эти документы в мельчайших подробностях регламентировали жизнь в местах заключения и устанавливали множество норм и ограничений, даже не упомянутых в открытом законодательстве. Исходя из результатов сравнения международного и национального законодательств, регулирующих лишение свободы женщин, и на основе полученных выводов, диссертантом выявляются определенные коллизионные вопросы отбывания наказания в виде лишения свободы осужденных женщин в РА, а также даются возможные варианты их устранения. В частности, предлагается внести дополнения и изменения в Уголовно-исполнительный кодекс РА и в Постановление Правительства РА от 3 августа 2006г.

Во второй главе данной работы детально анализируется порядок и условия исполнения наказания в виде лишения свободы осужденных женщин, то есть анализируется не только законодательная база, регулирующая данные правоотношения, но и рассматривается проблема исполнения данных норм на практике. Порядок и условия исполнения наказания в виде лишения свободы осужденных женщин был осуществлен на основе опроса 134 осужденных женщин и 100 сотрудников уголовно-исполнительного учреждения “Абовян” и Уголовно-исполнительного управления Министерства юстиции РА, изучения личных дел осужденных женщин, а также посещения уголовно-исполнительного учреждения “Абовян”. Так как микросоциальные условия содержания осужденных в исправительных учреждениях оказывают существенное влияние на процесс их исправления и они выступают в качестве объективной детерминанты поведения осужденных, диссертантом был также представлен и проанализирован вопрос субкультуры осужденных женщин и его особенности.

В заключении диссертант излагает основные выводы диссертационного исследования, в том числе конкретные предложения по законодательным изменениям и дополнениям, что позволит обеспечить научную обоснованность реформирования исполнения наказания в виде лишения свободы в отношении осужденных женщин.

յալ: Այդ նպատակներին հասնելու համար հետազոտությամբ դրվել են հետևյալ խնդիրները՝

1) կանանց ազատագրկման հիմնախնդրի տեսական մշակվածության աստիճանն ու մակարդակը պարզելու համար մասնագիտական գրականության ընդհանրացում և վերլուծություն

2) դատապարտյալ կանանց իրավական վիճակի առանձնահատկությունների ուսումնասիրությունը և դրա իրավական կարգավորումը ինչպես միջազգային, այնպես էլ ազգային օրենսդրությամբ

3) նոր քրեական և քրեակատարողական օրենսդրության տեսանկյունից դատապարտյալ կանանց նկատմամբ պատժի անհատականացման ու տարբերակման սկզբունքի կիրառման ուսումնասիրությունը

4) ազատագրկման դատապարտված կանանց պատժի կատարման արդի պայմանների ուսումնասիրությունը և դրանց՝ գործող օրենսդրությանը համապատասխանության հարցի պարզումը

5) դատապարտյալ կանանց ենթամշակույթի ուսումնասիրությունը, նրա առանձնահատկությունների վերլուծությունը

6) դատապարտյալ կանանց իրավական վիճակի և ուղղման արդյունավետության բարձրացման նպատակով գործնական առաջարկությունների և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ լրացումների և փոփոխությունների մշակումը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են դատապարտյալ կանանց ազատագրկման ընթացքում, և պատժի կատարմանն առնչվող այլ իրավահարաբերություններ: Հետազոտության առարկա են միջազգային, քրեական և քրեակատարողական նորմերն ու ինստիտուտները, որոնք կարգավորում են ազատագրկման դատապարտված կանանց պատժի կատարման կարգը, պայմաններն ու առանձնահատկությունները:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմել համակարգակառուցվածքային, գործառնութային, ձևական-տրամաբանական, պատմաիրավական, համեմատական-իրավական, կոնկրետ սոցիոլոգիական մեթոդները: Հետազոտության արդյունքները հիմնավորվում են նաև փաստաթղթերի ուսումնասիրության և վերլուծության մեթոդի կիրառմամբ ստացած տվյալներով:

**Հետազոտության տեսական հիմքը:** Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի, կրիմինալոգիայի, կրիմինոպենոլոգիայի, քրեակատարողական հոգեբանության ոլորտի աշխատությունները: Մասնավորապես օգտագործվել են Յու. Կ. Ալեքսանդրովի, Ա. Լ. Ալպերնի, Յու. Մ. Անտոնյանի, Ս. Ս. Ավետիսյանի, Ե. Գ. Բագրեկի, Ա. Ա. Գաբիանիի, Ա. Հ. Գաբուզյանի, Մ. Ն. Գերնետի, Յա. Ի. Գլինսկու, Է. Գրինի, Ս. Ն. Գեմենտևի, Ա. Ի. Գրուզինի, Բ. Գ. Չորավոմիսլովի, Ի. Վ. Ժիժինայի, Հ. Մ. Խաչիկյանի, Գ. Ֆ. Խոխրյակովի, Ի. Գ. Կոզոչկինի, Ս. Ի. Կոմարիցկու, Ա. Ս. Միխլինի, Ա. Ի. Մոկրեցովի, Վ. Ս. Մուխինայի, Ա. Մ. Յակովլևի, Ա. Վ. Նաումովի, Լ. Ե. Նատաշևի, Մ. Գ. Շարգորոդսկու, Ի. Վ. Շմարովի, Տ. Ս. Պետրովի, Վ. Լ. Վասիլևի, Յու. Մ. Տկաչևսկու, Լ. Ի Ռազբիրինի, Է. Ա. Սար-

կիսովայի, Վ. Ի. Սելիվերստովի, Ե. Վ. Սերեդայի, Օ. Վ. Ստարկովի, Ի. Ա. Սարուչկովի, Ֆ. Ռ. Սունդուրովի, Պ. Ռ. Ֆեդորենի, Ի. Յա. Ֆոյնիցկու և այլոց աշխատությունները: Հետազոտության մեջ օգտագործվել են նաև սոցիոլոգիայի ու հոգեբանության ոլորտների գիտնականների աշխատությունները:

**Հետազոտության նորմատիվ հիմքը:** Հետազոտության նորմատիվ հիմքն են Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշները, Եվրոպական բանտային կանոնները<sup>5</sup>, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոնները), Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիան, ՀՀ - Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը<sup>6</sup>, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը<sup>7</sup>, «Քրեակատարողական ծառայության մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին», «Դատախազության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածների պահելու վայրի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը, ՀՀ արդարադատության նախարարի հրամանով հաստատված Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, Ռուսաստանի Դաշնության քրեական և քրեակատարողական օրենսգրքերը, ինչպես նաև այլ իրավական ակտեր:

**Հետազոտության փորձառնական (եմպիրիկ) հիմքը:** Հետազոտության փորձառնական (եմպիրիկ) հիմք են հանդիսանում՝

- 1) ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պաշտոնական վիճակագրական տվյալները
- 2) ՀՀ գլխավոր դատախազության պատժի և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության հաշվետվությունները
- 3) փորձնական տվյալները, որոնք ստացվել են հեղինակի կողմից պրակտիկայի ուսումնասիրման և ամփոփման արդյունքում
- 4) ազատագրված դատապարտված 134 կանանց և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության և «Արմվյան» ԶԿՀ-ի 100 աշխատակիցների հարցաթերթիկավորման արդյունքում ստացված տվյալները: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են նաև դատապարտյալ կանանց ավելի քան 100 անձնական գործեր:

**Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:** Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ատենախոսության մակարդակով տեսական նյութերի և միջազգային ու ազգային օրենսդրական գործընթացի պրակտիկայի հի-

<sup>5</sup> Այսուհետ՝ ԵԲԿ:  
<sup>6</sup> Այսուհետ՝ ՀՀ քր. օր.:  
<sup>7</sup> Այսուհետ՝ ՀՀ ԶԿՕ:

**ОСОБЕННОСТИ ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ В ВИДЕ ЛИШЕНИЯ СВОБОДЫ В ОТНОШЕНИИ ОСУЖДЕННЫХ ЖЕНЩИН**

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена комплексному исследованию проблем исполнения наказания в виде лишения свободы в отношении осужденных женщин в РА. Целью диссертации является изучение и анализ исполнения и правового регулирования наказания в виде лишения свободы в отношении осужденных женщин, определение на основе данного анализа реформ уголовно-исполнительного законодательства и уголовно-исполнительной системы, внесение предложений по обеспечению научной обоснованности совершенствования уголовно-исполнительного законодательства РА по вопросам условий и порядка исполнения наказания в виде лишения свободы.

Научная новизна работы заключается в том, что на основе изучения теоретического материала и практики исполнения наказания в виде лишения свободы, впервые в РА на уровне кандидатской диссертации проведено всестороннее исследование проблем лишения свободы в отношении женщин в РА.

Практическая значимость диссертации состоит в том, что основные положения и выводы исследования могут быть использованы при разработке проектов законов о внесении изменений и дополнений в Уголовно-исполнительный кодекс РА, а также в учебном процессе юридических учебных заведений.

Диссертация состоит из введения, двух глав, с подразделением на параграфы, заключения, списка использованной литературы и приложения.

Во введении представлена актуальность и научная новизна исследования, степень изученности вопроса, цели и задачи работы, ее предмет и объект, методологическая, теоретическая, эмпирическая и нормативная основы, положения выносимые на защиту, а также представлены теоретическая и практическая значимость и апробация материала исследования.

В первой главе диссертант раскрывает социально-правовую сущность наказания в виде лишения свободы в отношении женщин, социально-правовую природу данного наказания, анализирует и сопоставляет международное и национальное законодательство, регулирующее лишение свободы женщин, в частности, уделяя большее внимание правовому положению осужденных женщин в РА. Лишение свободы как вид наказания предусмотрен в Уголовном кодексе РА, а порядок его исполнения – в Уголовно-исполнительном кодексе РА и в Постановлении Правительства РА от 3 августа 2006г. №1543-Н «Об утверждении Правил внутреннего распорядка исправительных учреждений и мест содержания арестованных уголовно-исполнительной службы Министерства юстиции РА». Кроме национального законодательства лишение свободы регулируется и международным законодательством. В особенности в последнее десятилетие возросло значение Минимальных стандартных правил ООН по обращению с заключенными, а также Европейских пенитенциарных правил. В последних были определены основные

մանդամ, հղի, կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալը վարձատրվող աշխատանքների ներգրավում է իր ցանկությամբ:»

Այս փոփոխությունների շնորհիվ կլուծվի դատապարտյալների զբաղվածության հարցը, կբարձրանա նրանց ուղղման արդյունավետությունը և նրանց իրական հնարավորություն կընձեռնվի փաստացի կատարել առկա գույքային պարտավորությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. «Лишение свободы: теория и практика»//Օրենք և իրականություն, 2007թ., թիվ 4 (138), էջեր 43-45:

2. «Կանայք ճաղերից այն կողմ»//Օրենք և իրականություն, 2007թ., թիվ 5 (139), էջեր 31-33:

3. «Некоторые спорные вопросы лишения свободы несовершеннолетних в РА»//Իրավագիտության հարցեր, 2008թ., թիվ 1-2, էջեր 20-24:

4. «Некоторые вопросы исполнения лишения свободы женщин по действующему уголовно-исполнительному законодательству РА»//Պետություն և իրավունք, 2009թ., թիվ 3 (45), էջեր 49-56:

5. «Դատապարտյալների ուղղման գործընթացը քրեակատարողական հիմնարկներում»//Երևանի «Մանց» համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, 2010թ., էջեր 173-184:

6. «Субкультура осужденных женщин и ее особенности в РА»//Պետություն և իրավունք, 2011թ., թիվ 3 (53), էջեր 114-121:

7. «Ազատագրված դատապարտված կանանց կապը արտաքին աշխարհի հետ»//Օրինականություն, 2011թ., թիվ 68, էջեր 26-31:

ման վրա իրականացվել է ազատագրված դատապարտված կանանց պատժի կատարման առանձնահատկությունների, նրանց իրավական կարգավիճակի և ենթամշակույթի ուսումնասիրություն: Առաջին անգամ վերլուծվել է այդ հիմնահարցերին վերաբերող քրեակատարողական օրենսդրությունը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝

1) Ազատագրվում պատժատեսակի սոցիալ-իրավական էությունն անմիջականորեն անդրադառնում է դատապարտյալ կանանց սոցիալական և իրավական բնութագրի վրա, ինչի վերլուծությամբ հնարավոր է հայտնաբերել այն գիտագործնական հիմնախնդիրները, որոնք առաջանում են կանանց նկատմամբ ազատագրված կատարման ընթացքում:

2) Դատապարտյալ կանանց իրավական վիճակը, լինելով դատապարտված կնոջ՝ իրավական տարբերակներով կարգավորվող իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջություն, տարբերվում է դատապարտյալ տղամարդու իրավական վիճակից: Օրենսդրորեն այդ տարբերությունը պայմանավորված է կնոջ ֆիզիոլոգիական առանձնահատկությամբ (հղիանալու հանգամանքը) և սոցիալական դերերից մեկով (երեխային կերակրելը), բայց գործնականում կանանց արտոնյալ պայմանների ստեղծումը պետք է պայմանավորված լինի նաև այլ հանգամանքներով, ինչպիսիք են մանկահասակ կամ հաշմանդամ երեխաների առկայությունը, որոնց նկատմամբ դատապարտյալ կինը գրկված չէ ծնողական իրավունքից, և որոնք գտնվում են նրա խնամքի տակ: Իհարկե, վերջինիս իրագործումը չպետք է խախտի դատապարտյալ տղամարդկանց իրավունքները:

3) Դատապարտյալ կնոջ պատիժն ակամա հանգեցնում է լրացուցիչ տառապանքների՝ նրա նկատմամբ նշանակված պատիժը վերածելով խոշտանգման կամ դաժան ու անմարդկային վերաբերմունքի, եթե չեն ապահովվում նրա ֆիզիոլոգիական կամ այլ առանձնահատկություններով պայմանավորված նվազագույն պահանջները: Հարաբերական ազատության առկայությունն ուղղիչ հիմնարկում և այն ազատ տնօրինելու հնարավորությունն ամենաթանկ արժեքներից մեկն է, որի նկատմամբ կատարված անգամ չնչին ոտնձգությունը կինը կարող է ցավազին ընդունել, ինչն ուղղակիորեն արտացոլվում է նրա հոգեկանի վրա՝ ագրեսիայի, լարվածության, հիսթերիայի, վախի և հոգեբանական այլ վիճակների տեսքով: Իսկ վերը նշված վիճակներն անմիջականորեն խոչընդոտում են դատապարտյալ կնոջ ուղղման գործընթացը՝ այն դարձնելով անարդյունավետ կամ ցածր արդյունավետ: Ուստի կանանց ուղղիչ հիմնարկներում պատժի կատարման պայմաններին վերաբերող խնդիրները հետազոտվելու են երկու խմբով՝ օրենսդրական խնդիրներ և գործնականում առկա խնդիրներ:

4) Դատապարտյալ կանանց ենթամշակույթը, ինչպես և ցանկացած ենթամշակույթ, հասարակական մշակույթի մի մասն է, որը տարբերվում է ընդհանուրից: Դատապարտյալների ենթամշակույթը հասարակության անբաժանելի մասն է: Այն՝ ունենալով սեփական արժեքային համակարգ, լեզու, վարք, հագուստ և այլն, միևնույնն է, բաղկացած է անձանցից, որոնց հետ ակամա մենք շփվում ենք և հարաբերվում ենք տարբեր մակարդակներում և ոլորտներում: Դատապարտյալ կանանց ենթամշակույթն իր անմիջական ազդեցությունն է ունենում կանանց պատժի կատարման պայ-

մանների վրա: Հետևաբար դատապարտյալ կանանց ենթամշակույթի և նրա առանձնահատկությունների ուսումնասիրությունը կնպաստի պատիժ կրած կանանց՝ հասարակությանը հարմարվելուն ու ինտեգրվելուն և ռեցիդիվային հանցավորության կանխելուն: Անհրաժեշտ է նշել, որ ենթամշակույթը ներառում է ոչ միայն սոցիալապես «վնասակար», այլ նաև «օգտակար» հատկանիշներ:

5) ՔԿՀ-ում միայն աշխատակից կանանց առկայությունը բերում է դատապարտյալ կանանց հոգեբանական անհարմարավետության, երբեմն ագրեսիայի, հակադարձման, դրա համար անհրաժեշտ է գտնել երկու սեռերի աշխատակիցների ներգրավմամբ աշխատանքի կազմակերպման արդյունավետ և նպատակային տարբերակը:

6) ՀՀ ՔԿՕ-ի 85-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «հնարավորության դեպքում» աշխատանքի տրամադրումը հակասում է և՛ Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշներին, և՛ ԵԲԿ-ին: Բացի այդ, դատապարտյալների աշխատանքը և՛ ուղղման արդյունավետ միջոցներից մեկն է, և՛ ստեղծելով դատապարտյալի զբաղվածություն, նրա առօրյան լրացնում է հանրորեն օգտակար գործունեությամբ: Իսկ, ինչպես հայտնի է, ազատ ժամանակի առկայությունը կարող է հանգեցնել հակահասարակական ու հակաիրավական գործունեություն ծավալելուն: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել գործող օրենսդրությունը՝ վարձատրվող աշխատանքների ներգրավելը դարձնելով ազատազրկման անբաժանելի մի մաս:

7) Ուղղիչ հիմնարկում օգտագործման համար արգելվող իրերը, ինչպես նաև ուղղիչ հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում՝ դատապարտյալների սահմանափակվող իրավունքները ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված անհրաժեշտ է, քանի որ նման սահմանափակումները, ըստ ՀՀ Սահմանադրության, կարող են սահմանվել միայն օրենքով:

8) Դատապարտյալ կնոջ կապն արտաքին աշխարհի և, մասնավորապես, ընտանիքի ու երեխաների հետ դրական է ազդում կնոջ վարքի և մտածելակերպի ձևավորման վրա: Նրանք դառնում են հանգիստ, հավասարակշռված՝ գիտակցելով, որ իրենց գոյությունն իմաստալից է, և իրենք անհրաժեշտ են ևս մեկ էակի: Հետևաբար անհրաժեշտ են օրենսդրական այնպիսի փոփոխություններ, որոնք իրական հնարավորություն կընձեռեն կանանց գիտակցել իրենց կարևորությունն ու դերն արտաքին աշխարհի և, հատկապես, երեխաների համար:

**Ատենախոսության տեսական նշանակությունը:** Ատենախոսության տեսական նշանակությունը նրանում է, որ այն հայրենական գիտությունում նոր քրեակատարողական օրենսդրության հիման վրա ազատազրկման դատապարտված կանանց վերաբերյալ կատարված առաջին համակողմանի, ամբողջական և մանրամասն հետազոտությունն է, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

**Աշխատության գործնական նշանակությունը:** Ատենախոսությունում ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ քրեակատարողական օրենսդրության կատարելագործման, ուսումնական և գիտական գրականության նախապատրաստման նպատակներով, «ՀՀ քրեակատարողական իրավունք» ուսումնական դա-

նանց վերաինտեգրվել հասարակություն և կնվազեցնի հանցագործությունների ռեցիդիվը:

7.7. Անհրաժեշտ է խոհանոց-ճաշարանում հատկապես ամառվա ամիսներին պահպանել՝ այդ շինությունների նկատմամբ կիրառվող սանիտարահիգիենիկ պայմանները:

7.8. Անհրաժեշտ է վերակառուցել «Աբովյան» ՔԿՀ-ը՝ ապահովելով կիսաբաց, կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկի պայմանները, որպեսզի իրագործվեն մեկուսացվածության աստիճանով պայմանավորված անջատ պահելու կանոնները:

7.9. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կառուցվածքում ստեղծել մասնագիտացված խումբ, որի պարտականությունների մեջ կմտնի կանանց նկատմամբ իրականացվող քրեակատարողական քաղաքականության մշակումը: Այդ կառույցի լիազորությունների մեջ կարող են ներառվել՝ կանանց նկատմամբ նշանակված պատիժների կատարման վերլուծություն, կանանց նկատմամբ պատիժների կատարման նոր ռազմավարության ձևավորմանն ուղղված առաջարկությունների նախապատրաստում՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու պահանջները, այդ թվում՝ ուղղիչ հիմնարկների բաժանումը տեղամասերի և կանանց համար այնպիսի պայմանների ստեղծումը, որ նրանք կարողանան պատիժը կրեն իրենց բնակության վայրերին մոտ, կանանց նկատմամբ պատիժների կատարմանը վերաբերող կոնկրետ խնդիրների հետազոտության և ուսումնասիրության նախաձեռնում՝ ներգրավելով տարբեր ոլորտի մասնագետների, ազատազրկման ձևով պատիժ կրող կանանց պահելու լավագույն փորձի փոխանակումը պետությունների միջև:

8. Քանի որ դատապարտյալների աշխատանքը հանդիսանում է ուղղման լավագույն միջոցներից մեկը, ինչը հստակ ամրագրված է միջազգային չափորոշիչներում, և ելնելով գործնական անհրաժեշտությունից, որ որոշ դատապարտյալներ ունեն գույքային պարտավորություններ (ալիմենտային պարտավորություն, քաղաքացիական հայց և այլն) անհրաժեշտ է ՀՀ քր. օր. 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Որոշակի ժամկետով ազատազրկումը սահմանվում է՝ աշխատանքի պարտադիր ներգրավմամբ կամ առանց դրա: Որոշակի ժամկետով ազատազրկման տեսակը ընտրում է դատարանը՝ հաշվի առնելով հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, անձի ուղղման համար աշխատանքի անհրաժեշտությունը, նրա գույքային վիճակը և նրա նյութական պարտավորությունների ամկայությունը:»

Բացի այդ, դատապարտյալի աշխատանքին վերաբերող փոփոխություններ պետք է կատարել նաև ՔԿՕ-ի 85-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ «հնարավորության դեպքում» արտահայտությունը պետք է փոխարինել «պարտադիր»-ով, և այդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝

«4. Վարձատրվող աշխատանքի չներգրավվելը համարվում է պատժի կատարման կարգի չարամիտ խախտում, ինչի համար դատապարտյալը ենթարկվում է կարգապահական տույժի: Դատապարտյալը վարձատրվող աշխատանքների կարող է չներգրավվել միայն բժշկական նկատառումներով: Առաջին կամ երկրորդ կարգի հաշ-

նարկների բազմազանությունը հնարավորություն կընձեռի անջատ պահել այն կանանց, ովքեր դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող են, պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող են, ինչպես նաև՝ ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող են:

6. «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» 2003թ.-ի ապրիլի 10-ի ՀՀ Կառավարության որոշմամբ դատապարտյալների համար սննդի չափաբաժինների հետ մեկտեղ սահմանված են նաև սննդի հավելյալ չափաբաժիններ հիվանդ դատապարտյալների համար, որոնք չեն տարածվում դատապարտյալ հղի կանանց, կերակրող մայրերի և անչափահասների վրա: Ստացվում է, որ ՀՀ ՔԿՕ-ի 76-րդ հոդվածի 3-րդ մասը վկայակոչում է գոյություն չունեցող ակտ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է Կառավարության որոշմամբ հաստատել սննդի չափաբաժիններ դատապարտյալ հղի կանանց, կերակրող մայրերի և անչափահասների համար:

7. Դատապարտյալ կանանց իրավունքների և մասնավորապես մայրության իրավունքի իրականացման հնարավորության պահպանման նպատակով առաջարկում ենք.

7.1. Դատավճիռը կայացնելիս հաշվի առնել կանանց հատուկ դերը և տեղը սոցիալական միջավայրում և մորից երկար բաժանվելու հետևանքով երեխաներին հասցված վնասը: Անհրաժեշտ է գիտակցել, որ ազատագրկման վայրերում կնոջ հոգեկան ապրումները բերում են սոցիալական համակերպման և հասարակություն վերադառնալու հնարավորության կորստի: Որքան քիչ է ազատագրկման վայրերում կնոջ գտնվելու ժամկետը, այնքան անցավ է հնարավոր նրա վերադարձը հասարակություն:

7.2. Ավելացնել կանանց ՔԿՀ-ի ֆինանսավորումը՝ դատապարտյալ կանանց համար միջազգային և ազգային նորմերին համապատասխան պայմանների ստեղծման նպատակով՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

7.3. Ապահովել ուսումնական գործընթացը դատապարտյալ կանանց համար:

7.4. Ապահովել կերակրող մայրերին դիետիկ սննդով, իսկ դատապարտյալ մայրերի հետ բնակվող երեխաներին՝ մանկական և դիետիկ սննդով:

7.5. Բարձրացնել ՔԿՀ-ում տրամադրվող բժշկական ծառայությունների որակը և ընդլայնել տրամադրման շրջանակը:

7.6. Ստեղծել վերականգնողական կենտրոններ, որտեղ նախկին դատապարտյալները կարող են ապրել և աշխատել՝ աստիճանաբար անցում կատարելով ազատագրկման կանոնակարգված կենցաղից ինքնուրույն կյանքի: Դա կօգնի սոցիալական կապերը, բնակության վայրն ու մասնագիտական հմտությունները կորցրած կա-

սընթացի ընթացքում և թեկնածուական, մագիստրոսական և այլ աշխատանքների նախապատրաստման համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:** Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում: Հետազոտության հիմնական դրույթները և եզրահանգումները ներկայացված են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ներդրված են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի և ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական գործընթացում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանում են հետազոտության նպատակներին ու խնդիրներին: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ պարագրաֆ պարունակող երկու գլխից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում է դրա մշակվածության աստիճանը, սահմանվում են թեմայի հետազոտման նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տրվում են ատենախոսական հետազոտության մեթոդաբանական, տեսական, նորմատիվ և փորձառնական հիմքերը, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ցույց է տրվում ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

**Ատենախոսության առաջին գլուխը՝** «Ազատագրկման սոցիալ-իրավական էությունն ու կանանց նկատմամբ դրա կատարման իրավական կարգավորումը», բաղկացած է երեք պարագրաֆներից:

**Առաջին պարագրաֆում՝** «Ազատագրկման սոցիալ-իրավական էությունը», հեղինակը բացահայտում է ազատագրկման և դրա կատարման սոցիալ-իրավական էությունը: Ազատագրկումը պատժի հնագույն ձևերից է, որը ենթարկվել է զգալի փոփոխությունների: Ազատագրկման կատարումը բովանդակությամբ բարդ, հակասական, փոխկապակցված և փոխհամաձայնեցված գործընթաց է: Ակնհայտ է՝ երբ խոսք է գնում պատժի կատարման մասին, առաջին հերթին նկատի է առնվում պատժի բովանդակությունը, այսինքն՝ այն սահմանափակումները և զրկանքները, որոնք բնութագրական են ազատագրկմանը: Ազատագրկման կատարման դեպքում դատապարտյալի իրավական վիճակը, համեմատած հասարակության այլ անդամների հետ, խիստ սահմանափակվում է, մասնավորապես քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և այլ իրավունքներում նրա նկատմամբ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կիրառվում են հարկադրանքի հատուկ միջոցներ: Ազատագրկումն ուղեկցվում է դատապարտյալի նկատմամբ որոշակի և բավականին լուրջ իրավասահմանափակումներով, որն էապես փոփոխում է անձի իրավական վիճակը: Ազատագրկման, ինչպես նաև այլ պատժատեսակների առջև դրված տեսական նպատակներից մեկը կառուցողական է, այն է՝ խթանել դատապարտյալի մեջ նոր անհատակա-

նության ձևավորում, ստեղծել գիտակցության այնպիսի մակարդակ, որով անձնական ազատությունը չի ընկալվի կամ գիտակցվի հասարակության առջև պատասխանատվությունից դուրս, և մասնավոր շահերը չեն օգտագործվի հանրային շահերին հակառակ: Հետևաբար հանցագործի ուղղման միջոցով պետք է հասնել նրա ազատության այնպիսի վիճակի, որն անհրաժեշտ է ազատ համակեցության պայմաններում ապրելու և դրանց հարմարվելու համար:

Ընդանրապես ազատագրված և նրա առանձին տարրերի գնահատման վրա հատկապես ազդում է անձի վերաբերմունքն ազատության վիճակին ու ազատ համակեցության պայմաններում կյանքի առանձին կողմերին: Դրանց նկատմամբ այս կամ այն վերաբերմունքն արտահայտում է անձի կենսական դիրքորոշումը, նրա արժեքային համակարգը և նպատակները: Ազատագրված բովանդակությունն անձի ազատության առանձին տարրերի սահմանափակման համակցության մեջ է: Ընդ որում, յուրաքանչյուր դատապարտյալի դեպքում այն կրում է անհատական բնույթ: Ազատագրված բաղադրիչները չպետք է դիտվեն որպես մեխանիկական հանրագումար, այլ պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն, որում յուրաքանչյուր մաս տրամաբանորեն փոխկապակցված կլինի մյուս մասի հետ: Եթե, օրինակ, ոչ համարժեք ուժեղացվեն նյութակենցադային սահմանափակումները, ապա դա կարող է հանգեցնել ազատագրված կառուցվածքային տարրերի ներդաշնակության խախտմանը: Արդյունքում դատապարտյալն առավել սուր կզգա ոչ թե ազատության կորուստը կամ հաղորդակցման սահմանափակումը, այլ նյութակենցադային սահմանափակումը, ինչն ընդհանուր առմամբ անցանկալի է, քանի որ վերջինս չունի ազդեցության այնպիսի ուժ, որով օժտված են անձի ազատությունն ուղղակիորեն բնութագրող տարրերը: Եվ հակառակը, այն դեպքում, երբ ստեղծվեն չհիմնավորված լավ նյութակենցադային պայմաններ, առհասարակ որոշ չափով կխարխլվի հենց պատժի գաղափարը և բովանդակությունը:

Այն սահմանափակումները, որոնք առկա են ՔԿՀ-ներում, բնորոշ են ազատագրվածանը կամ հանդիսանում են այս պատժատեսակի առանցքային տարրերից մեկի՝ արտաքին աշխարհից մեկուսացնելու ածանցյալները: Իհարկե, անձի ազատությունը նախատեսում է հիմնարար և անձնական իրավունքներ ու պարտականություններ, նյութական և հոգևոր կարիքների պատշաճ մակարդակ: Դատապարտյալի մի շարք կարիքների և իրավունքների սահմանափակումը համարվում է ազատագրվածան անբաժանելի տարր (ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու, հանգստի և այլ իրավունքների սահմանափակումներ): Վերջիններիս բացառումը կարող է խեղաթյուրել այս պատժատեսակի էությունն ու նպատակը: Բայց մյուս կողմից, կան որոշ սահմանափակումներ, որոնք ուղղակիորեն չեն բնութագրում այս պատժատեսակի էությունը, թեև որոշ չափով որոշում են պատժիչ ազդեցության ծավալը:

**Երկրորդ պարագրաֆում՝** «ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը և դատա-պարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերը», հեղինակը նշում է դատապարտյալ կանանց ազատագրվածանը վերաբերող իրավական ակտերի բազմազանությունը և մեկնաբանում դրանք:

«Ազատագրվում» պատժատեսակը նախատեսված է ՀՀ քր. օր.-ով, իսկ ազատագրվածան կատարման կարգն ու պայմանները՝ ՀՀ ՔԿՕ-ով և ՀՀ կառավարության

«6. Ուղղիչ հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել դատապարտյալների հետևյալ իրավունքները՝

- 1) կրոնական ծեսերին մասնակցելու,
- 2) քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու,
- 3) կրթություն ստանալու,
- 4) աշխատանքով զբաղվելու,
- 5) կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով լրացուցիչ սնունդ և առաջին անհրաժեշտության և այլ առարկաներ ձեռք բերելու,
- 6) լրացուցիչ վճարովի ծառայություններից օգտվելու,
- 7) դրամական փոխանցումներ, ծանրոցներ, հանձնուրքներ և փաթեթներ ուղարկելու և ստանալու,
- 8) նամակագրության,
- 9) զբոսանքի,
- 10) տեսակցություններ ունենալու,
- 11) հեռախոսակապից օգտվելու,
- 12) կարճաժամկետ մեկնումների,
- 13) առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու:

7. Ուղղիչ հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում դադարեցվում է դատապարտյալների տեղաշարժը, նրանք մնում են այնտեղ, որտեղ գտնվել են արտակարգ իրավիճակ հայտարարվելու պահին՝ մինչև վարչակազմի ներկայացուցչի նոր հրահանգը:»

4.9. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջներից ելնելով՝ ՀՀ ՔԿՕ-ը պետք է լրացնել ուղղիչ հիմնարկում արգելվող գործողությունները նախատեսող նոր հոդվածով:

4.10. Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու և նրանց կրթական մակարդակը բարձացնելու նպատակով առաջարկվում է ՀՀ ՔԿՕ-ի 89-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ մասով՝

«3. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը կազմակերպում է այն դատապարտյալների միջնակարգ կրթությունը, ում 30 տարին դեռ չի լրացել: Դատապարտյալների մասնակցությունը միջնակարգ կրթության գործընթացին պարտադիր է: Դատապարտյալի միջնակարգ կրթությունը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:»:

Ելնելով վերոգրյալից՝ համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն նաև ՀՀ Կառավարության 2006թ.-ի օգոստոսի 3-ի N1543-Ն որոշման մեջ:

5. Հարկ է մտածել, «Աբովյան» ՔԿՀ-ից բացի, դատապարտյալ կանանց պատիժը կրելու համար այլընտրանքային հիմնարկներ կամ մեկուսացված տարածքներ ստեղծելու մասին, որոնք կտեղակայվեն ՀՀ տարբեր մարզերում (ընտրությունը կարող է կատարվել՝ հաշվի առնելով կանանց հանցավորության ցուցանիշները): Ավելին, հիմ-

Մույն նորմը չի տարածվում այն դատապարտյալների վրա, ովքեր կատարել են առանձնապես ծանր հանցագործություն կամ կատարել են հանցագործություն ռեցիդիվի վիճակում»:

4.4. Քանի որ օրենսդրորեն ամրագրված չէ դատապարտյալ կանանց ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում անհրաժեշտ մասնագիտացված բժշկական օգնության հարցը, ուստի անհրաժեշտ է նախատեսել այդպիսի նորմ գործող օրենսդրության մեջ, օրինակ՝ լրացում կատարելով ՀՀ ՔԿՕ-ի 83-րդ հոդվածում:

4.5. ՀՀ ՔԿՕ պետք է լրացնել հետևյալ բոցանդակությամբ նոր հոդվածով՝

«Հոդված 92<sup>1</sup>. Գատապարտյալի կապն ուղղիչ հիմնարկից դուրս գտնվող երեխաների հետ

1. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ դատապարտյալի՝ իր երեխաների հետ կապն ապահովելու համար:

2. Գատապարտյալին, ում երեխան գտնվում է ուղղիչ հիմնարկից դուրս և պահվում է պետական հատուկ հաստատությունում, տրամադրվում է երկու ամիսը առնվազն մեկ կարճատև և վեց ամիսը առնվազն մեկ երկարատև տեսակցություն: Տեսակցությունների առավելագույն քանակը չի սահմանափակվում և որոշվում է հաշվի առնելով դատապարտյալ անձի բնութագիրը, նրա վարքագիծը, կապը երեխայի հետ և ազդեցությունը նրա վրա:

3. Գատապարտյալների և պետական հատուկ հաստատություններում պահվող նրանց երեխաների միջև տեսակցություններն իրականացվում են այդ հաստատության և ուղղիչ հիմնարկի կողմից համատեղ: Տեսակցության հետ կապված ծախսերը հոգում է դատապարտյալը, իսկ եթե նա անվճարունակ է, ապա մեկնումների հետ կապված ծախսերը կարող են կատարվել պետության հաշվին:

4. Պետական հատուկ հաստատություններում պահվող երեխաների հետ տեսակցությունից առաջ անհրաժեշտության դեպքում իրականացվում է նախապատրաստական աշխատանք սոցիալական աշխատողի, հոգեբանի կամ մանկավարժի կողմից:»

4.6. ԵԲԿ 84-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ ՔԿՕ-ում անհրաժեշտ է նախատեսել նորմ, որը թույլ կտա բժշկի ղեկավարությամբ կազմակերպել ֆիզիկական դաստիարակություն և բուժական ֆիզկուլտուրա դրա կարիքն ունեցող դատապարտյալների համար:

4.7. ՀՀ Կառավարության N1543 որոշման հավելվածի 2-րդ ձևով սահմանված է այն իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկը, որոնք արգելվում են ունենալ կալանավորված անձանց և ազատազրկման դատապարտյալներին իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնություններով, ծանրոցներով և փաթեթներով: Բայց այն պետք է նախատեսել ՀՀ ՔԿՕ-ում հավելվածի տեսքով՝ հավելելով, որ այդ դրույթները կիրառվում են նաև կարգապահական գումարտակում և կալանքի ձևով պատիժ կրող անձանց նկատմամբ:

4.8. ՀՀ ՔԿՕ-ի 71-րդ հոդվածը պետք է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ և 7-րդ մասերով՝

2006թ.-ի օգոստոսի 3-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով»:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քր. օր.-ը կանանց նկատմամբ ազատազրկում նշանակելու վերաբերյալ, իսկ ՀՀ ՔԿՕ-ը՝ կատարման որևէ առանձնահատկություն չեն նախատեսում<sup>8</sup>, թեև այդ օրենսգրքերում պարունակում են հղի կանանց և մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց վերաբերյալ որոշակի հատուկ նորմեր: Ազգային օրենսդրությունից գատ «ազատազրկում» պատժատեսակին են վերաբերում նաև դատապարտյալների հետ վարվեցողության մի շարք միջազգային փաստաթղթեր: Առավել ուշադրության է արժանի ՄԱԿ-ի 1955թ.-ի Գատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշները (վերանայված 1976թ.-ին), ինչպես նաև 1987թ.-ի ԵԲԿ-ը (վերանայված 2006թ.-ին): Այդ ակտերը նախատեսում են դատապարտյալների հետ տարվող սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք հիմնված են մարդու արժանապատվության, արդար վարվեցողության, դատապարտյալների իրավունքների պաշտպանության և միջազգային չափանիշների պահպանման սկզբունքների վրա: Նախկինում ազատազրկման դատապարտվածների պատժի կատարման պայմանները որոշվում էին ոչ միայն և ոչ այնքան գործող Հայկական ԽՍՀ ուղղիչ-աշխատանքային օրենսգրքով, այլև տարաբնույթ ենթաօրենսդրական ակտերով (Ներքին կանոնակարգ և Ներքին գործերի նախարարության ավելի քան երեք հարյուր ակտեր ու հրահանգներ): Ներկայումս Հայաստանում քրեակատարողական իրավահարաբերությունները կարգավորող ենթաօրենսդրական ակտերն ավելի քան երեսունն են, բայց դրանք հիմնականում կարգավորում են քրեակատարողական իրավահարաբերությունների կազմակերպատեխնիկական ոլորտները, որոնք օրենքի կարգավորման առարկա չեն կազմում կամ հանդիսանում են տարբեր գիտությունների և իրավունքի նորմերի համակցության արդյունք: Ազատազրկման ձևով պատժի կատարման կարգն ու պայմանները կարգավորող իրավական ակտերի թիվը շատ չէ: Բացի ՀՀ ՔԿՕ-ից, դրանց թվին կարելի է դասել՝ ՀՀ օրենքը «Քրեակատարողական ծառայության մասին» (2005թ. հուլիսի 8), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը (2006թ. օգոստոսի 3), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները (2003թ. ապրիլի 10), ՀՀ արդարադատության նախարարի հրամանը «Ազատազրկման վայրերում պահվող անձանց հետ ամուսնության գրանցման կարգը սահմանելու մասին» (2003թ. ապրիլի 2) և այլ իրավական ակտեր:

Համադրելով ազգային և միջազգային օրենսդրությունը՝ հեղինակը եկել է եզրակացության, որ միջազգային օրենսդրության որոշ դրույթներ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չեն կամ գործնականում չեն իրականացվում: Մասնավորապես, չկա ԵԲԿ-

<sup>8</sup> Սեր կարծիքով, այս հանգամանքը պայմանավորված է գեղեցիկին հավասարությամբ և կանանց ու տղամարդկանց պատժի կատարման պայմանների նույնական լինելու անհրաժեշտությամբ:

ով և Պեկինյան կանոններով նախատեսված երիտասարդ կին հանցագործների ազատազրկման առանձնահատկություններին վերաբերող նորմեր, «Աբովյան» ՔԿՀ-ում կին աշխատակիցների թիվը բավարար չէ, որպիսի ապահովի ԵԲԿ-ով ամրագրված պարտավորությունը, ինչպես նաև չի ապահովվում այն պահանջը, որ կանանց տեղամաս արական սեռի աշխատակիցների մուտքը թույլատրվում է միայն կին աշխատակիցների ուղեկցությամբ:

Հաշվի առնելով, որ մեկ անձի համար նախատեսված բնակելի տարածքի նվազագույն չափը Եվրոպական հանձնաժողովը սահմանում է 7մ<sup>2</sup>, ՄԻԵԳ-ը իր որոշումներում խցերն ու կացարանները կառուցելիս ուղորդվում է այդ օրինակելի չափանիշով: Բացի այդ, Եվրոպայի խորհուրդը ենթադրում է, որ Եվրոպական հանձնաժողովի կողմից մեկ դատապարտյալի հաշվով բնակելի տարածքը մոտ ապագայում կորոշվի 9-ից 10մ<sup>2</sup>: Իսկ ՀՀ-ում այդ ցուցանիշը 4մ<sup>2</sup>:

ՀՀ-ում հստակեցված չեն կին դատապարտյալների առանձնահատկություններից բխող սոցիալական իրավունքները, մասնավորապես նրանց կապն արտաքին աշխարհի, ընտանիքի և երեխայի հետ: Այս պարագրաֆում ուսումնասիրվել են նաև ֆոտոտրիստական որոշակի առաջարկներ, որոնք հնչել են միջազգային կամ միջկառավարական հանդիպումների ժամանակ:

**Երրորդ պարագրաֆում՝** «Ազատազրկման դատապարտված կանանց իրավական վիճակը», հեղինակը մանրամասնում է դատապարտված կնոջ իրավական վիճակը և մեկնաբանում նրա այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք առավել հաճախ են խախտվում, կամ թերի են կարգավորված, կամ ունեն որոշ առանձնահատկություններ:

Ինչպես նշվում է և՛ միջազգային, և՛ ազգային օրենսդրության մեջ, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ դատապարտյալների անձնական կյանքը կողմնակի անձանցից, այդ թվում նաև առողջության հետ կապված, պաշտպանելու համար, և նրանց հնարավորություն տալ կապվելու ազգականների կամ ընկերների հետ: Հատուկ ուշադրություն է պահանջում ազատազրկման պայմաններում կանանց ֆիզիկական և հոգեկան առողջության հիմնախնդիրը, ինչը սերտորեն փոխկապակցված է սանիտար-հիգիենիկ և կենցաղային պայմանների բարելավման հետ: Բացի այդ, դատապարտյալ կնոջ վիճակի չափազանց կարևոր տարրն է հանդիսանում նրա մայրությունը, որը փաստորեն չի ստեղծում ոչ մի արտոնություններ կնոջ և իր երեխաների համար, ովքեր ամբողջովին մեկուսացված են՝ մոր պատիժը կրելու ընթացքում (բացառությամբ հղի և մինչև երեք տարեկան երեխաներ ունեցող կանանց): Դատապարտյալ կանանց պահելու առանձնահատկությունները նախատեսված են ՀՀ ՔԿՕ-ի 82-րդ - հոդվածում և Ներքին կանոնակարգի IX բաժնում: Ազատազրկման վայրերում գտնվող հղի կանայք կամ կերակրող մայրերը հայտնվում են շատ ծանր դրության մեջ, քանի որ ՔԿՀ-ը հեռու է երեխայի դաստիարակության համար իդեալական վայր լինելուց, նույնիսկ եթե այնտեղ կան դրա համար բոլոր անհրաժեշտ սանիտարահիգիենիկ և այլ պայմաններ: Միևնույն ժամանակ ծանր է փոքր երեխային մորից առանձնացնելու վերաբերյալ որոշում կայացնելը: Այդ իսկ պատճառով այս հիմնախնդրի երկակիությունը բարդացնում է նրա կիրառումը պրակտիկայում և յուրաքանչյուր դեպքում լուծվում է անհատապես: Հղիության և կերակրման ընթացքում դատապարտյալ կինը

նպատակին ծառայող հատուկ՝ ուղղիչ (քրեակատարողական) հիմնարկներում տեղավորելու միջոցով, դատարանի դատավճռով սահմանված ժամկետով»:

2. Նպատակահարմար է ցմահ ազատազրկումը վերանվանել անորոշ ժամկետով ազատազրկում, քանի որ այս անվանումն ավելի է համապատասխանում այդ պատժի էությանն ու բովանդակությանը:

3. Ելնելով կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված ՀՀ իրավական ակտերից, մասնավորապես «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը և դրա միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004թ.-ի ապրիլի 8-ի որոշումից՝ անհրաժեշտ է մշակել դատապարտյալ կանանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հատուկ ծրագիր:

4. Թեև ՀՀ քրեակատարողական օրենսդրությունն ավելի առաջադիմական է, քան ԱՊՀ անդամ որոշ երկրների քրեակատարողական օրենսդրությունները, ինչը ոչ վերջին հերթին պայմանավորված է նրանով, որ ՀՀ ՔԿՕ-ն ընդունվել է 2004թ.-ի դեկտեմբերի 24-ին, այսինքն՝ ավելի ուշ, քան ԱՊՀ անդամ որոշ երկրների ՔԿՕ-ները, բայց, այնուամենայնիվ, այն նույնպես պարունակում է որոշ բացթողումներ, որոնք անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել: Վերոնշյալների թվին կարելի է դասել.

4.1. Հաշվի առնելով, որ ՀՀ-ում դատապարտյալներին տրամադրվում է մեկնում ՔԿՀ-ի սահմաններից դուրս, մեր կարծիքով, դատապարտյալ կանանց կարելի է կարճաժամկետ մեկնման հնարավորություն տալ նաև հաշմանդամ երեխաների հետ տեսակցության համար, առավել ևս, որ նման իրավունքից գործնականում օգտվելու են եզակի անձինք: Առաջարկվում է կատարել համապատասխան լրացում ՀՀ ՔԿՕ-ի 80-րդ հոդվածի 1-ին մասում:

4.2. Գործնականում, եթե երեխան ծնվում է ՔԿՀ-ում, ծննդյան վկայականում դրա մասին ոչ մի նշում չի կատարվում: Այս նորմն ամրագրված է ԵԲԿ-ում: Մեր կարծիքով, այս նորմը պետք է ամրագրվի նաև ՀՀ ՔԿՕ-ի 82-րդ հոդվածում:

4.3. Անհրաժեշտ է ՀՀ ՔԿՕ-ի 82-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«Ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալ հղի, կերակրող կանանց և մանկահասակ երեխաներ ունեցող դատապարտյալ անձանց, ովքեր պատիժը կրելու սահմանված կարգի խախտումներ թույլ չեն տվել, և ովքեր ունեն ընտանիքներ, հիմնարկի պետի որոշմամբ հնարավոր է թույլատրել բնակվել իրենց ընտանիքների հետ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում գտնվող բնակելի կացարանում:

Նման արտոնություն ստացած դատապարտյալները պարտավոր են ներկայանալ ամիսն առնվազն չորս անգամ վարչակազմի հաշվառմանը: Հաշվառման պարբերականությունը սահմանվում է հիմնարկի պետի որոշմամբ: Բնակելի տարածքները, որտեղ բնակվում են դատապարտյալները, ցանկացած ժամանակ կարող է այցելել հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը:

րությունը հոգ է տանում նրանց սննդի և կենցաղի պայմանների, նրանց բժշկական ապահովման, հանգստի մասին: Եվ չնայած այդ հանգամանքին, այնտեղ կան որոշակի խնդիրներ՝ «բանտային ռեժիմից» մնացած հին ու խարխլված սենյակները վերանորոգելը և դրանց կահավորելը՝ դատապարտյալներին անջատ պահելու համար՝ կիսաբաց, կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկների պայմաններն ապահովելով, տաք ջուր անցկացնելը և բոլոր խցերում լոգախցիկներ տեղադրելը, դատապարտյալ կանանց նկատմամբ ՔԿՀ-ի որոշ աշխատակիցների արհամարական ու ամբարտավան վերաբերմունքը վերացնելը (թեև նման դեպքերը հազվադեպ են), ՔԿՀ-ում նոր կադրեր շարունակաբար ընտրելն ու վերապատրաստելը, մրցութային հիմունքներով նոր աշխատակիցներ ընդունելը՝ պահանջելով բարձր կրթական որակավորում, աշխատակիցների համապատասխանելիություն նշանակված պաշտոններին և այլն:

13. Դատապարտյալների ենթամշակույթն ընդհանրապես և կանանցը մասնավորապես տարբերվում է հասարակության ընդհանուր մշակույթից: Այս հանգամանքը թելադրված է մի շարք գործոններով, որոնցից հիմնականն են. ենթամշակույթ կրողների հակահասարակական և հակաօրինական վարքագիծը, հասարակությունից մեկուսացումը, բնակվողների միասեռ լինելը, վարքի նկատմամբ մշտական հսկողության և վերահսկողության առկայությունը, ազատ շփման անհնարիությունը և այլն:

14. ՔԿՀ-ում կանայք բաժանվում են փոքր, առանձին խմբերի, այսպես կոչված «ընտանիքների»: «Ընտանիքում» կարող է լինել երկուսից մինչև տասը կին, որոնց տարիքը մոտավորապես նույնն է, թեկուզ չեն բացառվում դեպքեր, երբ մի «ընտանիքում» կանանց տարիքի տարբերությունը տատանվի 25-30 տարի: Կանայք «ընտանիքում» միասին սնվում են, օգնում միմյանց, պաշտպանում միմյանց շահերը:

15. ՔԿՀ-ներում երեխաների ներկայությունը դրական է ազդում դատապարտյալ կանանց ենթամշակույթի վրա: «Ընտանիքը» հոգ է տանում երեխայի մասին, պաշտպանում և պահպանում է նրան, շատ դատապարտյալ կանանց մոտ «արթնանում է մայրական բնագործ», ամբողջ ազատ ժամանակը նրանք անց են կացնում այդ երեխայի հետ՝ դրանով կատարելով սոցիալապես օգտակար աշխատանք:

16. Չնայած դատապարտյալ կանանց ենթամշակույթը չունի այդքան բացասական ազդեցություն դատապարտյալների վրա, չի հանդիսանում հակահասարակական աստիճանակարգավորված խումբ, և նրանում այդքան վառ չէ արտահայտված դատապարտյալների շերտավորումը, այնուամենայնիվ առկա բացասական գործոններն ազդում են դատապարտյալ կանանց վարքի, մտածելակերպի, պահվածքի ձևավորման և առօրյա կյանքի կազմակերպման վրա ինչպես ՔԿՀ-ում, այնպես էլ նրանից դուրս:

Ելնելով աշխատանքի բովանդակությունից՝ կարելի է հստակեցնել հետևյալ առաջարկությունները.

1. ՀՀ քր. օր.-ի 59-րդ հոդվածի 1-ին մասում նշված որոշակի ժամկետով ազատազրկման օրենսդրորեն ամրագրված հասկացությունը ամբողջական չէ, ինչից ելնելով՝ առաջարկվում է տալ հետևյալ սահմանումը՝ «...ազատազրկումը որոշակի ժամկետով՝ դատապարտյալին հասարակությունից հարկադիր մեկուսացնելն է՝ նրան այդ

պետք է ստանա հավելյալ սնունդ, հարկ եղած դեպքում դիետիկ, ինչը ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չէ՝ չնայած ՀՀ ՔԿՕ-ը հղում է կատարում այդպիսի ակտին:

Վիճելի հարցերից մեկը մնում է դատապարտյալների աշխատանքի վերաբերյալ միջազգային և ազգային իրավունքի նորմերի միջև հակադրությունը: Աշխատելու պարտադիր լինելու նշանակությունն այն է, որ այն իրականացվում է մեծ ծավալներով, ունի անմիջական կապ դատապարտյալների վերահանրայնացման հետ, հնարավորություն է տալիս պատշաճ կերպով օգտագործելու ՔԿՀ-ների կողմից տրամադրվող աշխատանքային ուժը և իրականացնում է հանրության այն սպասելիքները, որ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալները պետք է պարտադիր կերպով ներգրավվեն աշխատանքի մեջ: Միջազգային փաստաթղթերում աշխատանքը չի համարվում հարկադիր, եթե այն սահմանված է դատավճռի հիման վրա<sup>9</sup>, իսկ ՀՀ ՔԿՕ-ի 85-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ դատապարտյալը հնարավորության դեպքում է ապահովվում աշխատանքով կամ նրան հնարավորություն է տրվում ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով: ՀՀ գործող քրեական օրենսդրությունը չի պարունակում որպես պատժատեսակ՝ ազատազրկում աշխատանքի պարտադիր ներգրավմամբ: Կարծում ենք՝ անհրաժեշտ է կա՛ն փոփոխություններ կատարել ՀՀ ՔԿՕ-ում և դատապարտյալներին ներգրավել վարձատրվող աշխատանքներում, ինչը կլուծի նրանց զբաղվածության հարցը, կա՛ն անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ում ավելացնել նոր պատժատեսակ՝ ազատազրկում որոշակի ժամկետով՝ աշխատանքի պարտադիր ներգրավմամբ, կա՛ն դիտել այն որպես որոշակի ժամկետով ազատազրկման տարատեսակ: Աշխատանքի պարտադիր ներգրավմամբ ազատազրկման քրեաիրավական կանոնակարգումը թույլ կտա համապատասխանեցնել ազգային քրեական օրենսդրության նորմերը միջազգային իրավունքի նորմերին և կբարձրացնի դատապարտյալների ուղղման արդյունավետությունը:

**Ատենախոսության երկրորդ գլուխը՝** «Ազատազրկման դատապարտված կանանց՝ պատժի կատարման հիմնախնդիրները», բաղկացած է երկու պարագրաֆներից:

**Առաջին պարագրաֆում՝** «Ազատազրկման դատապարտված կանանց՝ պատժի կրելու կարգն ու պայմանները», հեղինակը ներկայացնել է ազատազրկման դատապարտված կանանց պատժի կատարումը: ՀՀ-ում ազատազրկման դատապարտված կանայք պատիժ են կրում «Աբովյան» ՔԿՀ-ի կանանց տեղամասում: Այն կառուցվել է 1958թ.-ին որպես դաստիարակչական գաղութ անչափահասների համար: ՔԿՀ-ում տեղակայված են ակումբ, գրադարան, փոքր կենդանաբանական այգի, դպրոց և օժանդակ տնտեսություն, որտեղ իրականացվում են գյուղատնտեսական աշխատանքներ (անասնապահություն, այգեգործություն և այլն): «Աբովյան» ՔԿՀ-ն ունի երկու տեղամաս՝ դատապարտյալ կանանց ու դատապարտյալ անչափահասների համար: Այդ տեղամասերն իրարից բաժանված են բետոնե պարսպով, մուտքն ու ելքն իրականացվում է տարբեր անցակետերով, և դատապարտյալ կանայք ու դատապարտյալ անչափահասները փաստացի իրար հետ չեն շփվում (բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտյալ կանայք և անչափահասները համատեղ աշխատում են ՔԿՀ-ի տարածքում կամ ներգրավվում են լուսավորչական միջոցառումներին): Բացի այդ,

<sup>9</sup> Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին ԱՄԿ-ի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

«Աբովյան» ՔԿՀ-ի բաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պատիժ են կրում նաև ազատագրկման դատապարտված տղամարդիկ, ովքեր պահվում են կանաց հետ համատեղ առանձնացված տեղամասում՝ պահպանելով համակեցության կանոնները:

Դատապարտյալների նյութակենցադային ապահովումն իրականացվում է հետևյալ ուղղությունով՝ անհրաժեշտ կացարանային և կոմունալ-կենցադային պայմանների ստեղծում, սննդի ապահովում, բնափրային ապահովում, առևտրային ցանցի և նյութակենցադային ապահովման լրացուցիչ այլ աղբյուրների գործունեության կազմակերպում: Կանայք պահվում են առանձին չփակվող կացարաններում: Դատապարտյալներին անջատ պահելու պահանջը չի պահպանվում: Բնակելի տարածքի նվազագույն չափը՝ 4մ<sup>2</sup> մեկ դատապարտյալի հաշվով, ապահովվում է: Դատապարտյալների բնակելի կացարաններն ապահովված են սեղաններով, աթոռներով, պահարաններով, խմելու ջրով և սահմանված կարգին համապատասխան այլ սարքավորումներով ու առարկաներով: Խցում պարտադիր լինում է նաև հագուստի կախիչ, ռադիոընդունիչ և աղբարկղ: Մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալները ստանում են նաև երեխայի խնամքի համար անհրաժեշտ իրեր և առարկաներ: Կացարանները համապատասխանում են սանիտարահիգիենիկ պահանջներին, գոյություն ունի ջեռուցում, անհրաժեշտ բնական և արհեստական լուսավորում, ջերմաստիճանը ձմռանը ապահովվում է ոչ պակաս, քան +18-+20°C, թեև երբեմն լինում են դեպքեր, երբ ջերմաստիճանը լինում է ավելի ցածր: ՀՀ Կառավարության 2006թ.-ի օգոստոսի 3-ի որոշման համաձայն՝ դատապարտյալին անհատական օգտագործման նպատակով տրամադրվում են՝ մահճակալ, անկողնային պարագաներ և սպիտակեղեն, խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ՝ ալյումինե կամ պլաստմասայե), միասնական նմուշի հագուստ և անձնական հիգիենայի պարագաներ:

Բացի այդ, դատապարտյալների ընդհանուր օգտագործման համար յուրաքանչյուր խցում նախատեսվում են սեղանի խաղեր, մաքրությունն ապահովելու համար անհրաժեշտ առարկաներ, իսկ կենցաղում օգտագործվող կտրող-ծակող առարկաներն ու իրերը դատապարտյալներին տրամադրվում են ՔԿՀ-ի վարչակազմի հսկողության տակ: Դատապարտյալներն իրենց հագուստն ու անկողնային պարագաները կարող են լվանալ ինքնուրույն, ինչի համար նրանց տրամադրվում են համապատասխան միջոցներ և չորանոց, ինչպես նաև կարող են օգտվել լվացքատան ծառայությունից: Կանայք հիմնականում լվացքն իրենք են անում, չնայած որոշ դատապարտյալներ նախընտրում են այդ նպատակի համար «վարձել» ուրիշների: Դատապարտյալն ապահովվում է իր սեռին, տարվա եղանակին, կլիմայական պայմաններին համապատասխանող միասնական նմուշի հանդերձանքով: Դատապարտյալ կանանց տրամադրվում են՝ գլխաշորեր, կիսավերարկու, բաճկոն, տաբատ, զգեստ-կոստյում, զգեստ և բլուզ:

«Աբովյան» ՔԿՀ-ում նյութակենցադային պայմաններն ապահովելու նպատակով, բնակելի տարածքից դուրս են գտնվում խոհանոց-ճաշարանը, բաղնիքը, վարսավիրանոցը, լվացքատունը՝ ախտահանման խցիկով, կոշիկի և հագուստի վերանորոգման սենյակը, անձնական իրերի պահպանման սենյակը, չորանոցը և այլ կոմունալ-կենցադային օբյեկտներ: Հարկ է նշել, որ խոհանոց-ճաշարանում աշխատում են դատապարտյալ կանայք, և այդտեղ կարգուկանոնի և մաքրության պահպանումը նրանց

րաժքներն ունեին համապատասխան նպատակային կառուցվածք, հետևաբար դրանք ուղղիչ հիմնարկների պայմաններին հարմարեցված չեն:

5. Ընդհանուր առմամբ, դատապարտյալ կնոջ (բացառությամբ հղի և մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց) իրավական վիճակն էապես չի տարբերվում դատապարտյալ տղամարդու իրավական վիճակից, ինչը բխում է նաև գենդերային հավասարությունից և այդ ուղղությամբ ՀՀ-ում տարվող քաղաքականությունից:

6. Դատապարտյալ կանանց մոտ երբեմն նկատվում են իրենց երեխաներից հրաժարվելու միտումներ, այդ իսկ պատճառով՝ նրանք հաճախ լինում են օտարված ու ագրեսիվ: Բայց, եթե մայրը հոգ է տանում իր անչափահաս որդու կամ դստեր մասին, ակտիվորեն պահպանում է երեխայի հետ կապը, ապա դա պետք է համարել դատապարտյալի ուղղման նախապայման:

7. Ազատագրկման դատապարտված կանանց ուղղման հիմնախնդիրները զգալի բարդություն են ներկայացնում: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ կանանց հանցավորության աճը բնութագրվում է ոչ միայն քանակական չափանիշներով, այլ նաև կանանց հանցագործությունների շրջանակի ընդլայնմամբ՝ ներառելով այնպիսի հանցավոր արարքներ, որոնք մինչև վերջերս բնորոշ են միայն տղամարդկանց: Հետևաբար անհրաժեշտ է փոխել նրանց նկատմամբ կիրառվող ազդեցության մեթոդներն ու միջոցները:

8. Ծնողական (մայրական) իրավունքից զրկելը կանանց ՔԿՀ-ի հիմնական, եթե ոչ ամենակարևոր հարցերից մեկն է: Եվ զուգե սա է դատապարտյալ կանանց հիմնական տարբերությունը դատապարտյալ տղամարդկանցից: Այն, որ ինչ-որ տեղ, երբեմն նաև անհայտ տեղ մեծանում են իր երեխաները, նրանց տեսնելու կամ դժվար պահին օգնելու անհնարիությունը, անտանելի է մոր համար:

9. Մշտապես լինելով դատապարտյալների միջավայրում հաճախ՝ ճնշված տարածքային պայմաններում՝ դատապարտյալ կանայք գտնվում են հուզական լարվածության մեջ: Արդյունքում, այս իրավիճակը հանգեցնում է հոգեբանական գրգռվածության, որն արտահայտվում է ագրեսիվ վարքագծով՝ երբեմն հասնելով մինչև ապօրինի գործողություններ կատարելուն:

10. ՔԿՀ-ներում երբեմն նկատվում են հոգեկան հետադարձ զարգացման՝ ինֆանտիլացման տարրեր, ինչը զարմանալի չէ, քանի որ այդպիսի կարգավիճակով ավելի հեշտ է ենթարկվել կանոնակարգին և վարչակազմի օրինական պահանջներին: Բացի այդ, այն համարվում է օրգանիզմի պաշտպանական ռեակցիան ՔԿՀ-ի արտասովոր պայմաններին:

11. Դատապարտյալ կանանց մեջ հակասական վերաբերմունք կա պատժից ազատվելու հանդեպ՝ նրանք նույնքան վախենում են դրանից, որքան երազում դրա մասին: Միևնույն երևույթի վերաբերյալ երկակի, հակասական զգացումների առկայությունը (ամբիվալենտությունը) անդրադառնում է նրանց վարքագծի վրա, հանգեցնում է լարվածության, վախի, տրամադրության փոփոխության և այլ վիճակների:

12. «Աբովյան» ՔԿՀ-ում աշխատակիցները հիմնականում դրսևորում են քաղաքավարի ու բարեկիրք վերաբերմունք դատապարտյալ կանանց նկատմամբ, ղեկավար

որը մշտապես դրսից ստանում է ծանրոց, հանձնուք կամ փաթեթներ, կացարանում զբաղեցնում է իշխող դիրք: Այդ «ընտանիքի» առաջնորդը խցի ավագն է: Կանանց ենթամշակույթի կառուցվաքը այլ է, քան տղամարդկանցը, հարաբերությունները լցված են այլ բովանդակությամբ, այստեղ այլ բարոյականություն է: Իհարկե, այստեղ էլ առկա են հակահասարակական ուղղվածությամբ և կանոնակարգը հաճախակի խախտող խմբեր, բայց ընդհանուր առմամբ այստեղ խախտումները կոպիտ ու ազդեցիկ չեն՝ ի տարբերություն տղամարդկանց ՔԿՀ-ների: Շատ հաճախ այսպիսի խմբերի անդամներ հանդիսանում են բռնի և հատկապես բռնի-շահադիտական հանցագործությունների համար դատապարտված կանայք: Այն կանայք, ովքեր կատարել են կողոպուտ կամ գողություն, նրանց կազմի մեջ հազվադեպ են ընկնում: Դատապարտյալների զգալի մաս են կազմում այն կանայք, ովքեր լավ են աշխատում և իրենց լավ են դրսևորում:

**Եզրակացության** մեջ ընդհանրացված ձևով ներկայացվում են ատենախոսական հետազոտության հիմնական արդյունքները, որոնք հանգում են՝

1. Ազատագրվում պատժատեսակն ունի մի շարք հակասություններ, որոնցից առավել էական են հետևյալները՝

– ձգտելով որոշակի գրկանքների և սահմանափակումների միջոցով ստիպել մարդուն դրսևորել օրինապահ վարքագիծ՝ պետությունը միաժամանակ նրան պատճառում է ավելորդ տառապանքներ, ինչը ետ է պահում դատապարտյալին ուղղվելու ցանկությունից

– ձգտելով դատապարտյալի սոցիալական վերափոխմանը՝ նրան պահում են այնպիսի պայմաններում, որոնք նպաստում են սոցիալական կապերի թուլացմանն ու խզվելուն, ինչը միանշանակ բացասական է ազդում դատապարտյալի վրա

– ձգտելով հանցագործին հասարակություն վերադարձնել որպես օրինապահ անձ՝ նրան տեղավորում են հակասոցիալական անձանց միջավայրում, որոնց ազդեցության տակ նա կարող է դրսևորել առավել հակասոցիալական վարքագիծ:

2. Ազատագրվումը կարգավորվում է և՛ ազգային, և՛ միջազգային օրենսդրությամբ: Վերջին տարիներին աճել է Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշների և ԵԲԿ-ի նշանակությունը:

3. Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշներում (ինչպես նաև ԵԲԿ-ում), հատկապես նորմեր-առաջարկությունները, նախատեսված են տնտեսապես զարգացած և, հետևաբար, բնակչության բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրների համար: Հայաստանում դեռ առկա է տնտեսական ճգնաժամ, և՛ բնակչության, և՛ ամբողջ պետության եկամուտների մակարդակի իջեցում, այդ իսկ պատճառով միջազգային ակտերում նշված շատ նորմեր հնարավոր չէ կիրառել մեր իրականության մեջ:

4. «Աբովյան» ՔԿՀ-ում կան բաց, կիսաբաց, կիսափակ և փակ ուղղիչ հիմնարկներ: Բայց, քանի որ «Աբովյան» ՔԿՀ-ն կառուցվել է դեռ խորհրդային տարիներին, երբ հիմնականում դատապարտյալները պահվում էին խցային պայմաններում և տա-

անմիջական պարտականությունն է: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ ամառվա ամիսներին խոհանոց-ճաշարանի վիճակը ոչ միշտ է համապատասխանում պահանջվող սանիտարահիգիենիկ պայմաններին: Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված չափանիշների՝ դատապարտյալներին տրամադրվում է երեք անգամյա տաք սնունդ: Դատապարտյալի բուժսանիտարական ապահովումը սկսվում է նրան ուղղիչ հիմնարկ ընդունելու պահից: Ուղղիչ հիմնարկի ներքին կանոնակարգի համաձայն՝ նոր ընդունված դատապարտյալներն անցնում են պարտադիր բժշկական հետազոտություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև սանիտարական մշակում, այնուհետև տեղափոխվում են կարանտինային բաժանմունք մինչև 7 օր տևողությամբ:

Ազատագրված դատապարտված հղի կանանց և կերակրող մայրերի համար «Աբովյան» ՔԿՀ-ում ստեղծված են հատուկ պայմաններ: Սակայն այն դատապարտյալ կանանց համար, ովքեր ազատության պայմաններում ունեն երեխաներ, նրանց հետ կապ պահպանելու հնարավորության հարցն օրենսդրորեն ամրագրված չէ: Գործնականում այս խնդիրը լուծվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու ՀՀ գիտության և կրթության նախարարությունների հետ համատեղ, քանի որ վերջինների ենթակայության տակ են այն ուսումնական և հատուկ հաստատությունները, որտեղ պահվում են դատապարտյալ կանանց երեխաները: Ցավոք, դատապարտյալ կանանց ու նրանց՝ ազատության պայմաններում թողնված երեխաների միջև տեսակցությունները պարբերաբար չեն իրականացվում, ինչը պայմանավորված է ինչպես տարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններով, այնպես էլ նյութական ու սոցիալական ապահովության և այլ խնդիրներով: Բացի դրանից՝ իրավիճակը դժվարանում է՝ ելնելով այն հանգամանքից, որ գործող օրենսդրությունը չի նախատեսում նման տեսակցությունների տրամադրումը որպես դատապարտյալների իրավունք:

Դատապարտյալ տղամարդկանց համեմատությամբ դատապարտյալ կանայք առանձնահատուկ սրությամբ են ընկալում հասարակությունից մեկուսացվելու հանգամանքը: Նրանց հոգեֆիզիոլոգիական էության առանձնահատկությունները պայմանավորում են նրանց գերզգայունությունը, շրջապատի բացասական ազդեցության ընկալման բարձր աստիճանը, լալկանությունը և գրգռվածությունը: Նրանց մոտ ավելի հաճախ, քան տղամարդկանց մոտ լինում են նյարդահոգեկան խախտումներ,<sup>10</sup> առաջանում են սթրեսային վիճակներ (ֆրոստրացիա, դեպրեսիա, թախիծ, դատապարտված լինելու զգացողություն): Դատապարտյալ կանանց մեծ մասն անհանգիստ է, ինչը պայմանավորված է մերձավորների և շրջապատող անձանց օտարմամբ (ընտանեկան բռնությունը, ամուսնալուծությունը, ծնողների կողմից հոգատարության և սիրո բացակայությունը):<sup>11</sup>

«Աբովյան» ՔԿՀ-ի և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցների հարցմամբ պարզվել է, որ դատապարտյալ կանանց մեծամասնությունն ունեին ընտանիքներ, չնայած երբեմն ամուսնությունը գրանցված չէ և շատերը ունեին երեխաներ: Դատապարտյալ կանանցից շատերը ունեցել են մեծ ընտանիքներ՝ բաղկացած ավելի քան չորս անձից: Հետաքրքրական է

<sup>10</sup> Մանրասան տե'ս՝ Шелдон С. Если наступит завтра. М. 1992. էջեր 47-107:

<sup>11</sup> Антонян Ю. М. Преступность среди женщин. М. 1992. էջեր 65-66:

այն փաստը, որ դատապարտյալ կանայք մինչև հանցագործություն կատարելն ունեցել են որոշակի աշխատանք: Այն դատապարտյալ կանայք, ովքեր մինչև դատապարտվելը զբաղվել են պոռնկությամբ, հարցաթերթիկում դա նշում էին որպես աշխատանք, թեև գործունեության ոլորտը որոշելիս այն նշել են որպես «այլ ոլորտ»:

Դատապարտյալ կանայք նվազ պահանջկոտ են բնակելի տարածքների նկատմամբ, քան աշխատակիցները, և կանանց հիմնական դժգոհությունը հարմարավետության բացակայությունն է: Սենյակներում նեղվածքից դժգոհում է դատապարտյալ կանանց ընդամենը 1%-ը, սակայն այն հարցին թե՛ «Ի՞նչ է անհրաժեշտ բնակելի պայմանները բարելավելու համար», նրանց մեծ մասը նշել էր. «պակասեցնել բնակվողների քանակը», այսինքն՝ կացարանների և խցերի ծանրաբեռնվածության վերաբերյալ այս կամ այն կերպ անհանգստացած է դատապարտյալների մեծամասնությունը՝ մասնավորապես հաշվի առնելով նաև այն, որ դատապարտյալ կանայք, ելնելով ուղղիչ հիմնարկների մեկուսացման աստիճանից, անջատ չեն պահվում: Դատապարտյալ կանանց մեծամասնությունը դժգոհում էին բժշկական սպասարկումից (հարցվածների երկու երրորդը), թեև աշխատակիցների մեծամասնությունը, ընդհակառակը, գոհ էին (հարցվածների երկու երրորդը): Այդ դժգոհությունն արդարացի է, քանի որ «Աբովյան» ՔԿՀ-ում կան բժիշկ-մասնագետներ ոչ բոլոր անհրաժեշտ մասնագիտություններով, թեև որոշ մասնագետներ այցելում են «Աբովյան» ՔԿՀ-ն ու կազմակերպում խորհրդատվություններ դատապարտյալ կանանց համար:

«Աբովյան» ՔԿՀ-ում դատապարտյալ կանայք ներգրավվում են վարձատրվող աշխատանքներում գյուղատնտեսական ոլորտում (անասնապահություն, այգեգործություն, մեղվաբուծություն և այլն) ու կարի արտադրամասում: Դատապարտյալներին աշխատանքից բավարարված լինելու հարցին ստացվել են հետևյալ պատասխանները. աշխատակիցներն ավելի դժգոհ էին դատապարտյալներին տրամադրվող աշխատանքից, քան դատապարտյալ կանայք, որոնց մի մասը նշեց, որ ցանկացած աշխատանքի առկայությունն իրենց համար արդեն իսկ բավարար է, քանի որ աշխատելով նրանք գիտակցում են «իրենց օգտակար լինելը»: «Աբովյան» ՔԿՀ-ում դատապարտյալ կանանց ուսուցում չի իրականացվում, մինչդեռ շատ կանայք դեմ չէին լինի ստանալ միջնակարգ կամ բարձրագույն կրթություն: Միջնակարգ կրթության հնարավորություն ՔԿՀ-ը չի տրամադրում, իսկ բարձրագույն կրթությունն իրականացվում է դատապարտյալի հաշվին: Կրթության բացակայությունը նորմալ ընկալում են քչերը՝ աշխատակիցների 8%-ը, դատապարտյալ կանանց 18%-ը: Հարցվածների մեծ մասը հայտնեցին իրենց դժգոհությունն այս հարցի վերաբերյալ՝ նշելով, որ ընդամենը դասագրքերի և այլ մասնագիտական գրականության առկայությունն արդեն բավարար կլիներ ինքնակրթության կամ մասնագիտական վերապատրաստման համար: «Աբովյան» ՔԿՀ-ի կանանց տեղամասում ՔԿՀ-ի անձնակազմի, իսկ երբեմն էլ միջազգային կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից տարբեր թեմաներով անց են կացվում սեմինարներ և քննարկումներ, որոնք ուղղված են դատապարտյալների իրավագիտակցության բարձրացմանը և դատապարտյալներին հուզող հարցերի քննարկմանը: ՔԿՀ-ում դատապարտյալ կանանց զբաղվածությունը վատ է կազմակերպված. փաստացի նրանք շատ ազատ ժամանակ ունեն և հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ժամանցի կազմակերպումը: Այս հարցի շուրջ կար-

ծիրները բաժանվել են. հարցվածների կեսը գոհ է ժամանցի կազմակերպումից, թեև, ըստ էության, զանգվածային միջոցառումներ պարբերաբար չեն անցկացվում, իսկ երկրորդ կեսը՝ դժգոհ:

**Երկրորդ պարագրաֆում՝** «Դատապարտյալ կանանց ենթամշակույթի ազդեցությունն ազատագրված կատարման վրա», ներկայացվում է դատապարտյալ կանանց ենթամշակույթի հասկացությունն ու առանձնահատկությունները, դրա ձևավորումն ու ազդեցությունը դատապարտյալների վրա: Ենթամշակույթի առանձնահատկությունները թելադրված են մի շարք գործոններով, որոնցից հիմնականներն են.

1. ենթամշակույթի անդամների հակահասարակական և հակաօրինական վարքագիծը
  2. հասարակությունից մեկուսացումը
  3. բնակվողների միասեռ լինելը
  4. վարքագծի նկատմամբ մշտական հսկողության և վերահսկողության առկայությունը
  5. որոշակի տեղեկություններ թաքցնելու անհրաժեշտությունը ինչպես այլ դատապարտյալներից, այնպես էլ վարչակազմից
  6. ազատ շփման անհնարինությունը և՛ դատապարտյալների, և՛ վարչակազմի հետ:
- Այս գործոնները չեն կարող չազդել դատապարտյալների հոգեբանության վրա, որի հետևանքով փոխվում է նրանց վարքագիծը և վերաբերմունքը շրջապատող աշխարհի ու մարդկանց նկատմամբ: Ընդհանուր առմամբ դատապարտյալների և մասնավորապես դատապարտյալ կանանց ենթամշակույթը ոչ բնական գոյացություն է, ակամա ստեղծված խմբակցություն: Բայց դառնալով այդպիսին՝ այն ինքնակազմակերպվում է: Տղամարդկանց բոլոր ՔԿՀ-ներում ձևավորվում է եռաստիճան, խիստ աստիճանակարգված կառուցվածք՝ առաջնորդներ («օրենքով գողեր»), չեզոք մեծամասնություն և ամենացածր աստիճանը՝ մերժվածներ կամ բարոյալքվածներ: Կանանց ՔԿՀ-ներում իրավիճակն այլ է, չկա որևէ նման հստակ բաժանում: ՔԿՀ-ում կանայք ասես բաժանվում են առանձին փոքր խմբերի, այսպես կոչված «ընտանիքների»: «Ընտանիքում» կարող է լինել երկուսից մինչև տաս կին: Կանայք «ընտանիքում» միասին ուտում են, պաշտպանում են միմիանց շահերը, օգնում են միմյանց:

«Ընտանիքում» կանանց տարիքը մոտավորապես նույնն է, թեկուզ չեն բացառվում դեպքեր, երբ մի «ընտանիքում» կանանց տարիքային տարբերությունը տատանվի 25-30 տարվա սահմաններում: «Ընտանիքները» համախմբվում են տարբեր եղանակներով: Այն «ընտանիքը», որտեղ բոլորը ստանում են ծանրոց, հանձնուք կամ փաթեթներ, երբեք չի ընդունի այնպիսի կին, որը դրանք չի ստանում: Եվ հակառակը, այն «ընտանիքը», որտեղ դրսից չեն ստանում ծանրոց, հանձնուք կամ փաթեթներ, մեծ սիրով կընդունի այնպիսի կանանց, որոնք դրսից ստանում են դրանք: Կրթությունն ու դաստիարակությունը չունեն սկզբունքային նշանակություն «ընտանիքի» ձևավորման համար: Նշանակություն ունի բացառապես ֆինանսական դրությունը: Յուրաքանչյուր «ընտանիք» ունի իր առաջնորդը, ով երբեմն կարող է տարածել իր՝ ղեկավարի լիազորությունները նաև այլ «ընտանիքների» նկատմամբ՝ կախված այդ «ընտանիքների» առաջնորդների հատկանիշներից: Լավագույն նյութական ապահովվածություն ունեցող «ընտանիքը»,